




ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՑՈՒՑԱՀԱՆՌԵՍԻ ԿՈՄԻՏԵՅԻ

15 ՀՈՒՆԻՍԻ 1937 թվ

Կոլանտեսությունների, խորհանտեսությունների, մեքենատրակտորային կոյանների, կոլանտեսային տպրանքային ֆերմաների, ինչպես և գյուղատնտեսության առաջավորների ու կազմակերպիչների՝ Համամիութենական Գյուղատնտեսական, ցուցահանդեսին մասնակցելու պայմանների մասին գյուղատնտեսության այն ճյուղերից, վորոնք չեն թվարկված ԽՍՀՄ ԺԿԽ և Համ Կ(բ)Կ ԿԿ կողմից 1937 թվի հունիսի 14-ին հաստատված՝ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի կոմիտեի վորոշման մեջ:

1. ԽՈՏԱՍԵՐՄԵՐ ՅԵՎ ԿԵՐԱՅԻՆ ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂ-
ՆԵՐ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլանտեսություններին ու խորհանտեսություններին, վորոնք խոտասերմերի ու կերային արմատապտուղների բարձր ու կայուն բերքատվության համար մղած պայքարում 1936 թվին հասել են և 1937 թվին կհասնեն ամբողջ տրանային տարածության վրա հետեվյալ կույտուքաներից վորեվ մեկից միջին հաշվով մի հեկտարից՝ Ժրայանկից վոչ պակաս 2,5 ցենտներից, անթիսոցորենուկից վոչ պակաս 3,5 ցենտներից, կորնզանից վոչ պակաս 8 ցենտներից, մեղրածուծից, տիմոֆեևի խոտից, ամերիկական ձեզից, վորնախոտից վոչ պակաս 3 ցենտներից, ազվեսագուց, չվեզական յերեքնուկից վոչ պակաս 2 ցենտներից, սպիտակ յերեքնուկից վոչ պակաս 1,5 ցենտներից, մարզազետնային

63

2-21



131 131 131
 1) 1936 թ. հասել են և 1937 թ.վին կհասնեն ցանքի ամբողջ տարածությունից վոչ պակաս 4 գեներներից, մոզարից վոչ պակաս 5 գեներներից, սուդանի խոտից, կերի ճակընդեղից վոչ պակաս 7 գեներներից, կերի գազարից, տուրնեպսից և գոնգեղից վոչ պակաս 4 գեներներից:

II. ՉԱԼԹՈՒԿ

Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսություններին ու խորհրդային տնտեսություններին, վորոնք բրնձի բարձր ու կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թ. հասել են և 1937 թ.վին կհասնեն ցանքի ամբողջ տարածությունից վոչ պակաս, քան.

ա) Ղազախական իՍՏ-ում և Ազով-Սևծովյան յերկրում՝ միջին հաշվով մի հեկտարից վոչ պակաս, քան 45 գեներներ բերքի:

բ) Ուզբեկական, Տաջիկական, Թուրքմենական, Կիրգիզական, Ադրբեջանական, Ուկրաինական, Հայկական իՍՏ և Հեռավոր Արևելյան յերկրում՝ մի հեկտարից վոչ պակաս, քան 35 գեներներ բերքի:

գ) Դաղստանի, Կարաբաղի-Ֆալկարիայի ԱՍՏ-ում և Ստալինգրադի մարզում՝ մի հեկտարից վոչ պակաս, քան 30 գեներներ բերքի:

III. ՅՈՒՂԱՏՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսություններին ու խորհրդային տնտեսություններին, վորոնք յուրաքանչյուր կուլտուրաների բարձր ու կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թ. հասել են և 1937 թ. կհասնեն ցանքի ամբողջ տարածությունից միջին հաշվով:

ա) տիգլանեփից, վուչից և մանանեխից վոչ պակաս, քան 7 գեներներ բերքի, իսկ տիգլանեփի ջրովի տեսակներից՝ վոչ պակաս, քան 10 գեներներ բերքի:

բ) սոյայից վոչ պակաս, քան 11 գեներներ բերքի:

գ) արախիսից՝ վոչ պակաս, քան 10 գեներ. բերքի:

դ) քնջութից և պերեկից վոչ պակաս, քան 6

ցեներներ բերքի, իսկ ջրովի ցանքերից՝ վոչ պակաս քան 9 գեներ. բերքի:

յե) Կանչոակից (սաֆլոր) և կակաչից՝ վոչ պակաս, քան 7 գեներ. բերքի:

IV. ՅԵԹԵՐԱ-ՅՈՒՂԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսություններին ու խորհրդային տնտեսություններին, վորոնք յեթերա-յուղային կուլտուրաների բարձր ու կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թ. հասել են և 1937 թ.վին կհասնեն ցանքերի ամբողջ տարածությունից միջին հաշվով մի հեկտարից՝

Կորիանդրից՝ վոչ պակաս՝ քան 7 գեներների, Ֆենխելից՝ վոչ պակաս, քան 8 գեներների, անանուխից (տերենները՝ անանուխը ծեծելուց հետո)՝ վոչ պակաս, քան 10 գեներների, վարդից (թարմ թերթիկներ)՝ վոչ պակաս, քան 7 գեներների, լավանդայից (ծաղկած)՝ վոչ պակաս՝ քան 15 գեներների, մուսկատային զոպայից՝ վոչ պակաս, քան 35 գեներների, խորդենիից՝ վոչ պակաս, քան 150 գեներների (թարմ ցողուններ):

V. ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ, ՎՈՒՇԻ ՅԵՎ ԿԱՆԵՓԻ ՍԵՐՄԵՐ

Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսություններին ու խորհրդային տնտեսություններին, վորոնք սերմերի բարձր ու կայուն բերքի համար մղվող պայքարում 1937 թ.վին կհասնեն ցանքերի ամբողջ տարածությունից միջին հաշվով մի հեկտարից:

ա) շաքարի ճակնդեղից՝ վոչ պակաս, քան 20 գեներների:

բ) վուչից՝ վոչ պակաս, քան 5 գեներների:

գ) կանեփից՝ վոչ պակաս քան 5 գեներների:

VI. ԲԱՆՋԱՐԵՂՆԵՐ, ԲՈՍՏԱՆԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՍԵՐՄԵՐԸ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսություններին ու խորհրդային կոլտնտեսություններին, վորոնք բանջարեղենի, բոստանային կուլտուրաների և նրանց սերմերի բարձր ու կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թ. հասել են և 1937 թ. կհասնեն ցանքի ամբողջ տարածությունից միջին հաշվով մի հեկտարից:

ա) ուտելու ճակնդեղից և դադարից՝ վոչ պակաս, քան 300 ցենտների, ձմերուկից ու սեխից՝ վոչ պակաս, քան 225 ցենտների, դդումից՝ վոչ պակաս, քան 350 ցենտների:

բ) վարունգի, կաղամբի և սոխի սերմերից՝ վոչ պակաս, քան 4 ցենտների, դադարի սերմից՝ վոչ պակաս, քան 6 ցենտների, ուտելու ճակնդեղի և լոբազլիների սերմերից՝ վոչ պակաս, քան 12 ցենտների, բոստանային կուլտուրաների սերմերից վոչ պակաս, քան 2 ցենտների:

գ) բոլոր բանջարեղենների համար դրված ջերմոցային շրջանակների ամբողջ քանակից՝ վոչ պակաս, քան մի շրջանակից 14 կիլոգրամի (միջին բերքը հաշվելիս սոխը 25 տոկոսից ավելի չպիտի լինի):

դ) ճախարակավոր ջերմոցներում՝ միջին հաշվով վոչ պակաս, քան ջերմոցի մի հեկտարից 50 տոնն վարունգի և տոմատի:

յե) վարունգի ջերմոցներում ջերմոցի մի քառակուսի մետրից միջին հաշվով վոչ պակաս, քան 100 վարունգի:

VII. ՊՏՈՒՂՆԵՐ ՅԵՎ ԹՓԱՊՏՈՒՂՆԵՐ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսություններին ու խորհրդային կոլտնտեսություններին, վորոնք պտուղների ու թփապտուղների բարձր ու կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թ. հասել են և 1937 թ. կհասնեն:

ա) խնձորից և տանձից պտղաբերող այգիների մի հեկտարից միջին հաշվով վոչ պակաս, քան 85 ցենտների, դեղձից, ծիրանից, կեռասից, սալորից՝ վոչ պակաս, քան 75 ցենտների, բալից՝ վոչ պակաս, քան 50 ցենտների, թփապտուղներից՝ վոչ պակաս, քան 45 ցենտների:

բ) այն պտղաբեր տնկարաններից, վորոնք յուրաքանչյուր հեկտարից ապահովել են վոչ պակաս, քան 200 հազար հատ ինքնաբույս տնկի և 25 հազար հատ ստանդարտային տնկանյութ (յերկամյա):

VIII. ՅԻՏՐՈՒՍԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսություններին ու խորհրդային կոլտնտեսություններին, վորոնք բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թ. հասել են և 1937 թ. կհասնեն ամբողջ տարածությունից մի ծառից միջին հաշվով (վերածած - մեծահասակ ծառի) վոչ պակաս, քան 400 հատ մանդարինի կամ լիմոնի:

IX. ՆՈՐ ՅԵՆԹԱԿԵՂԵՎԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսություններին ու խորհրդային կոլտնտեսություններին, վորոնք նոր յենթակեղեվային կուլտուրաների բարձր ու կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թ. հասել են և 1937 թ. կհասնեն ցանքերի ամբողջ տարածությունից միջին հաշվով մի հեկտարից:

հարավային կանեփից և կենաֆից՝ վոչ պակաս, քան 70 ցենտներ ցողունի, կանառնիկից՝ վոչ պակաս, քան 50 ցենտներ ցողունի:

X. ԹԹԱՅԻՆ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆԿԱՐԱՆՆԵՐ

Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտես-

սուբյուկտներին ու խորհանդեսուբյուկտներին, վերոնշյալ 1936 թվին հասել են և 1937 թ. կհասնեն տնկատեղիների միջին հաշվով մի հեկտարից՝ վոչ պակաս, քան 300 հազար, իսկ ջրովի հողամասերում՝ վոչ պակաս, քան 450 հազար հատ տնկի ընդհանուր յեղքի:

XI. ԴԵՂԱՔՈՒՑՍԵՐԻ ԿՈՒՆՏՐԱՆԵՐ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսուբյուկտներին ու խորհանդեսուբյուկտներին, վորոնք ղեկավարվողների կուլտուրաների բարձր ու կայուն բերքի համար մղվող պայքարում 1937 թվին ցանքերի ամբողջ տարածությունից միջին հաշվով մի հեկտարից կհասնեն:

արջախաղողից (չորացրած տերև), վալերիանից (արմատներ)՝ վոչ պակաս, քան 10 ցենտների, կամ՝ ֆարային բազիլիկից (յուղ)՝ վոչ պակաս, քան 35 կիլոգրամի, դեղին մատենտունից (չորացրած տերև)՝ վոչ պակաս, քան 8 ցենտների, գալմաթական յերիցուկից (առաջին տարվա ծաղկածի սերմեր)՝ վոչ պակաս, քան 30 կիլոգրամի:

XII. ԹԹԵՆԻ

Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսուբյուկտներին ու խորհանդեսուբյուկտներին, վորոնք 1936 թ. հասել են և 1937 թ. կհասնեն ցանքի ամբողջ տարածության միջին հաշվով մի հեկտարից վոչ պակաս, քան 40 ցենտներ թթենու տերևի բերքի:

XIII. ԱՅԾԱՔՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն խորհարդատեսուբյուկտներին ու կոլտնտեսային ապրանքային ֆերմաներին, վորոնք 1936 թվին հասել են և 1937 թվին կհասնեն հետեվյալ ցուցանիշներից մեկին.

ա) տարվա սկզբին 100 մերունին կաթից կարվող

մաղաչ այծերի աղվամագավոր և կաթնատու տեսակներից վոչ պակաս, քան 130 հատի, անգորական և նրանց մետրիկներից՝ վոչ պակաս, քան 110 հատի.

բ) միջին հաշվով տարեկան մի գլխից զգված աղվամաղ մերձդոնյան այծերից վոչ պակաս, քան 350 գրամ, մյուս այծերից՝ վոչ պակաս, քան 240 գրամ.

գ) ամբողջ լակտացիոն շրջանում միջին հաշվով 1 գլխից տարեկան կիթ՝ աղվամագավոր տիպի այծերից՝ վոչ պակաս, քան 100 լիտրի:

կաթնատու ախլի այծերից՝ վոչ պակաս, քան 200 լիտրի:

XIV. ՄԵՂԱՔՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ այն կոլտնտեսուբյուկտներին ու խորհանդեսուբյուկտներին, վորոնք 1936 թ. հասել են և 1937 թվին կհասնեն մի ձմեռող մեղվաբնուանիքից յերկու անգամ ավելի ապրանքային մեղրաբերքի, քան շրջանային պլանն է, բայց վոչ պակաս, քան մեղվաբնուանիքին միջին հաշվով 40 կիլոգրամ, մոմի ապրանքային բերք մի մեղվաբնուանիքին վոչ պակաս, քան 600 գրամ և մի փեթակի մեղվաբնուանիքի աճում վոչ պակաս, քան 60 տոկոսով:

XV. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք տալ սոցիալիստական գյուղատնտեսության այն առաջավորներին, վորոնք բարձր և կայուն բերքի, անասնապահության բարգաժման ու բարելավման համար պայքարելիս 1937 թվին կհասնեն հետեվյալ ցուցանիշներին.

1) Առաջավոր մեղվաբույծներ, վորոնք ձմեռող բնուանիքից ապրանքային մեղրաբերք են ստացել միջին հաշվով վոչ պակաս, քան 70 կիլոգրամ և մի փեթակի մեղվաբնուանիքի աճում վոչ պակաս, քան 60 տոկոսով:

2) Առաջավոր բանջարաբույծներ, վորոնք մեկ հեկ-

տարից միջին հաշվով ստացել են կարտոֆիլից վոչ պակաս, քան 600 ցենտներ բերք, վարունգից և տոմատից՝ վոչ պակաս, քան 375 ցենտներ, կաղամբից, ճակնդեղից և գազարից՝ վոչ պակաս, քան 550 ցենտներ բերք:

3) Առաջավոր ողակավարները յուզատու, յեթերա-յուզային և դեղարույսերի կուլտուրաների գծով, վորոնք միջին հաշվով մի հեկտարից ստացել են արևածաղկից՝ վոչ պակաս, քան 27 ցենտներ բերք, տիգկանեփից, պերիլից, մանանխից, վուշից, սաֆլորից, կորիանդրից, դեղին մատնետունկից և վարդից (չորացրած թերթեր)՝ վոչ պակաս, քան 15 ցենտներ, արախիսից՝ սոյայից, անանուխից (ծեծած տերև), բելա-գոննայից (չորացրած տերև), վալերիանից՝ վոչ պակաս, քան 20 ցենտներ, քնջութից՝ վոչ պակաս, քան 10 ցենտներ, ֆենիսից՝ վոչ պակաս, քան 16 ցենտներ, լավանդայից (ծաղկած)՝ վոչ պակաս, քան 30 ցենտներ, մուսկատի չալֆեից վոչ պակաս, քան 60 ցենտներ, խորդենիից՝ վոչ պակաս, քան 250 ցենտներ, դարձաթական յերիցուկի սերմերից (I տարվա ծաղիկներից) վոչ պակաս, քան 40 կիլոգրամ, կամֆարային բաղրիկից (յուզ) վոչ պակաս, քան 60 կիլոգրամ:

4) Առաջավոր պտղաբույծներ: Առաջավոր ողակավարները, վորոնք 1935, 1936 և 1937 թվերին տարեկան միջին հաշվով մի հեկտարից ստացել են վոչ պակաս, քան 150 ցենտներ խնձոր և տանձ, կորզավոր պտուղներից՝ վոչ պակաս, քան 100 ցենտներ, թփապտուղներից՝ վոչ պակաս, քան 60 ցենտներ բերք:

5) Առաջավոր սերմնաբույծներ, վորոնք ողակում կանեփի և վուշի սերմնաբուծական ցանքերի մի հեկտարից միջին հաշվով ստացել են վոչ պակաս, 10 ցենտներ սերմ:

Գլխավոր լիազոր՝ Կ—4690

Հրատ. 4278. պատմ. 1227

Տիրամ 2000

ԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0291448

14. 97/1